

քակեցին նոյն լւստը, և Արշակ նեն  
գութեամբ կառաջարկէ համազգային  
երեսփոխաններէ կազմուած անդա  
ժողովի առջեւ միայն համարատու լի-  
նիլ. բայց Երուսաղէմի միաբանու-  
թիւնը, քամահրելով ամեն սոյն օ-  
րինակ յարձակումներ և դաւադիր  
խորհուրդներ, երկար ժամանակէն  
՚ի վեր ամենայն մասադիր ջանիւք կը  
պատրաստէ իւր հաշիւները՝ Վզգա-  
յին Վարչութեանը մասուցաննելու,  
և զինքն համարատու կը ճանաչէ ոչ  
միայն նոյն Վարչութեան, այլ նաեւ  
ամեն հայ անհատի առջեւ : Բայց  
թէ ինչո՞ւ կը յապաղի սոյն համարա-  
տուութիւնը, այս մասին միաբանու-  
թիւնը չէ յանցաւորը, այլ նոյն իսկ  
այն մարդիկը, որոնք չեն ուզեր վճա-  
րել առ Ո. Վթոռն ունեցած իրենց  
համարատուութեան պարագը : Օրի-  
նակի համար, Երուսաղէմի Վիաբա-  
նութիւնը ինչ լիակատար հաշիւ կա-  
րողէ մասուցաննել Վզգային Վարչու-  
թեանը Երիտոսի և Վզէբսանդիրից  
կալուածոց նկատմամբ, քանի որ ծա-  
խուց գումար միայն կը տեսնէ իւր  
հաշուետումարներուն մէջ, իսկ երես-  
նամեայ մտից և արդեանց գումար՝  
ոչ երբէք : Ուրեմն, միթէ բարւոք  
չէր լինիր, որ Արշակ, փոխանակ տագ-  
նապելու և համազգային երեսփոխա-  
նական ժողովի կազմութիւն երազե-  
լու, ջանար յորդորել իւր սատարները,  
որ Երուսաղէմի կալուածական հա-  
շիւն փութով աւարտէին, և Վիաբա-  
նութիւնս կարող լինէր օր առաջ իւր  
համարատուութեան արդար և նուի-  
րական պարտքը կատարել և իւր հա-  
շիւները Վզգային Վարչութեանը մա-  
տուցաննել : Վիթէ բարւոք չէր լինիր,  
որ Արշակ, փոխանակ մասնաւոր կու-  
սակցութեան ծառացելու, ջանար ի-  
րապէս ազգային հրապարական թիւր-

թիւ պաշտօն կատարել և Երուսաղէմի  
Վիաբանութեան արդար իրաւունքը  
պաշտպանել, որ ընդ հանոււր Վզգի ի-  
րաւունքն է : Ի՞նչ կը կարծէ Արշակ,  
միթէ թիւր և երազական դիտողու-  
թիւններ հրատարակելով կարող է  
լուցնել արդարութեան և իրաւանց  
ձայնը : Թուղ ըստիաբուի Արշակ իւր  
սնոտի յցսէրով և թող քաջ խելամբ-  
աէ, որ Երուսաղէմի Վիաբանութիւր  
բողոքած է, կը բողոքէ և պիտի բո-  
ղոքէ Վզգի իրաւունքը պաշտպանելու  
համար վասն զի համոզուած է, որ իւր  
բողոքն արդար է և իւր ազարտին է  
ընդ հանոււր Վզգի Կրականց Առաւակն:  
Եւ միթէ Վզգային Վարչութեան նը-  
ւիրական պարտքն չէ առաջնորդական  
խնդիրէն առաջ կալուածականն ա-  
ւարտել որուն համար այսափ ժամա-  
կէն ՚ի վեր կը նեզի Ո. Վթոռս : Վի-  
թէ պիտի չփատարէ նոյն Վարչու-  
թիւնը իւր անսուտ խոսանումը, որուն  
ակն գէտ կը սպասէ Ո. Վթոռս Սկ-  
աբանութիւնը:

Ա. Ռ. Ա. Կ

ԱՇԽԱՐ ԵՒ ԱՅՃ

Զուարթագին իիստ բաղդր աւուրց մէջ գարնոն  
երբ պճանակորդ երկիրն հագոււած անսան  
ծաղկներով շարժարուած էր շատ շապէ.  
Դաշտը և լեռնիք կը խօսացին գեղափալ.  
Կանաչազարդ մարդագետին ամեն տեղ.  
Նը ծածանին կը փալիլան գունագեղ  
չոտ մի խաչանց առառն կանուխ խմբ վին  
Տեսայ կու գար առջեւն ինկած իւր հոգուին  
Ծագեց արփին, նորա գէտ գէտն ցիրուցան  
Ցծարաբաժիկ մարդեր ուտել սկսան.  
Դաշտին մէկ դին ապառաժաւու լեռ մի կար.  
Ուսեպացած իիստ ժայռերով բարձրանայր:

Ա յս գարուժոս ժայռուտ լերին դաբեւոնդք  
կանչկըսային ակնահաճոյ գալար մարգ .

Գիտենք այծն ի՞նչ կամոկոր է և յախոռ :

Կը զարցանկ իւր հովիւներն անդադար :

Բամենուեցաւ քանի մեգամ երամեն .

Բայց կանցաւ պահապանաց հարուածէն .

Մէկ ալ տեսնես պատրեց հովիւն ուուր ակնարկ :

Ցատկեց իսկոն անցաւ գահերն կարգ ի կարգ :

Երբ ինքը հովիւն ծեռքէն աղատեց :

Բարձրէն մշղմիկ իւր ընկերին ձայն տուեց .

Գառնուկ մ' էր այս որ նոյն լրին ստորոտ :

Հանդարս և գոհ կ'ուտէր անոյշ մարգ արօս :

Անմեղ գառան ըստ այծը խորամնկ :

Կ'ուրուկ ինչնու այդ տեղ կենասացած անարգ :

Գէրութիւն չէ այդ քո վիճակ շարունակ :

Ուր լուռ ու մունջ կրես հովիւն խիստ մահակ :

Ո՛հ, ի՞նչ գառն է կամքին արգելուլ հանցքէն .

Աւդպէս կեանքը աւելի լատ է մահէն .

Աղատութեան աես ի՞նչ աղօւոր օրինակ :

Մէծ քաջութեամբ ահա կուտամ քեղ հիմակ :

Հետեւէ ինձ շատ գոհ կ'ընես և ուրախ :

Զե այս տեղերն պահանջով են և խաղաղ .

Գառնուկ մեղք ես, մի կաշկանդուիր լուծի տակ :

Անմութիւն ձրգէ, մէկդի եկ ցնծանք :

Ճէ խոտ կ'ուզե՞մ ասա լեցուն է, գեղցիկ :

Արօտներ կան որ կեանք կուտան մեղքալըրիկ .

Երջանկութիւն, գիտես անշուշ որ մինչ աստ :

Հովիւն անդութ չի գար հասներ փայտն ու սաստ :

Ո՛հ, այս միայն հէրիք բերկրանք մէր պրին :

Բայց եկ ու տես որ կայ այս տեղ աւելին .

Միջէն, հոգի, չես տեսներ սան գարեւանդք :

Ուր շողջաղան սրտարգաւ պէրճ մարմանդք :

Վանանցագեղ մարգաց ահա մեծ հոսանք :

Ուր հեղին նման կարծես տան հորդան ,

Եւ գունագեղ ալեծ ածան ծիծագիման :

Կը հրապուրեն և սրտերու շունչ կը տան :

Ես կ'ուզեմ որ գուն քու փոքով համոզուիս :

Մէկ մ' որ տեսնես, անհուր է բամնուիս :

Եկ այս բաղդէն, եկ գոնէ գու մի զրկուիր .

Իմ խօսքերուս ալ մի լինիր գիմադիր :

Այս հրապուրիչ և զրգըսող խօսքերէն :

Համզուեցաւ կարծես գառնուկն, ու մէկէն

Գլուխ վերցուց գնալ այծոյն ետեւէն :

Թողուլ այն կեանք որ դալու լը հանուան :

Բայց և յանկար կանք տաւ :

Մարտին աղէկ խորհեցաւ .

Ա յս ի՞նչ խենդ եմ ես, ըստ :

Ուր չեմ ձանչնար այծուն դաւ :

Ազատ վիճակն որոնն է .

Իւրն է արդեօք՝ թէ իմ է .

Նա առապար ժայռերէ :

Կը ելնել ստիպուեր է :

Խատ կայ՝ չի կայ, ով գիտ :

Մինչդեռ այս դաշտ խիստ մեծ է :

Աւատ խոսով լըցուն է :

Ուր բիւր խաշանց կը բաւէ : ո

Այծը խաբեց զիս ըստ :

Առջի տեղը ետ գարձաւ :

և այծուն ըստ :

« Հովիւն անշուշտ արգար է .

Մի թէ հնարք ըը գիտէ .

Քուրուկ յանկարծ հոգ կ'ելէ :

Եւ մեղ լաւ մը կը ծեծէ :

Դուն այս ալ մէկդի ձգէ :

Հապա այդ տեղ գարան շատ :

Գաղան կընի պահուած անդ :

Թէ որ վրագ դայ յանկարծ :

Չես աղատիր, անկանկած :

Ես իմ վիճակէս :

Գոհ եմ մեծապէս :

Հա լայն ասպարէզ :

Կ'ուտէմ մարգ և սէղ :

Խմեմ ջուր առաս :

Խաղամ աստ և անդ :

Չը կայ մեղ վտանգ :

Թէ հանդարս կինանք :

Քու խօսք է խարանք :

Միշտ գաւ և հնարք :

Ահա սս տեղ ջուր կը վաղէ :

Աւ գուն որչափ կուզես խօսէ :

Ես չեմ ինչար ընաւ ասկէ :

Գիտացաւ ոչխարն որ սուտ էր նա :

Ը աւ անտր ։ Ո՛վ ստանայ :

Դու շարունակ ստախօս ես :

Պարզամիտներն խաբել կուզես :

Թէ այդ տեղէն ջուր կը բղիս :

Ա յս ժայռէն վար չեմ պիտի հոսի :

Ուր է այդ տեղ ջրի հոսանք :

Գլխիս կ'ուղես բերել փորձա՞նք :

Չուարեցաւ առ վայրիկ մի այծ անդգամ :

Ճարպիկութեամբ գտաւ հնարք և այս անդամ :

Պատասխանեց կակաղելով և խիստ տարտամ :

Թէ ։ գուն ալ ի՞նչ կընես այդպէս թիւր գատաս :

ատան :

Աստ ահագին լայնարերան կայ մի խոռոշ :

Անկեց կ'երմայ, չես լին գու ջոյն խոխոջ :

Բայց թէ կամիս արդ եկու տես :

Թէ չես ուղեր աղն դու գիտես ու :

Այս ըսելով ալ ըւեց :

Քարէ ի քար ցաթկուտէց :

Մէկ մը վեր՝ մէկ մը վար :

Կը ոստոստէր անդադար :

Խաղեր կ'ըներ խիստ ձարտար :

Բայց իւր սիրան ալ կը դողար :

Քարին ծերպէն անսկնկալ  
Քազզած գոյլ մի գարանտիալ  
Յատկեց խկցին վերաց այծուն,  
Բայց մի կրցաւ հասնիլ որացն։  
Քանդի ճարպիկ այծն իւթնաբռով  
Յանկարծ վախուն խօստ իւշելով.  
Թռաւ մէկէն թեթև առիկ  
Կարծեց ժայռերն իւր խաղալիկ։  
Բայց ըստաւ ոտից կռուան։  
Փոքրիկ ոտքերն իրար անցան։  
Լովիծ ժայռէն գլորեցաւ։  
Անեղ գառան առնելու ննկաւ  
Եւ ջառ ի սիրտ այսպէս ըսաւ։  
Արժան էր քեզ, ո անիրաւ,  
Որ այդ փորձանք քեզ դիպեցաւ։  
Սուտ և յամառ կամապատին  
Յանձնապատան շարպործին  
Որ ըստ գիտեր շտի իւր անձին  
Այս է հարկաւ վերջն բաժին։

Այս իւրառակ չշմարիս  
Ռսկի մանեակ մարդարիս,  
Քեզ առ խրատ օգտակար  
Եւ մի թողուր արհամարհ։  
Դրուն որ չատարի չատիսոփիկ  
Լեզու կրես խարուսիկ։  
Գիտցիր որ իմ այս առակ  
Քեզ կ'ընէ միշտ խայտառակ։  
Մի կարծեր որ խօսք քեզէն  
Առ չիշտ ինձ ու քեզ համար է։  
Վարդէն։

## ԵԽԱՅԻՆ ԲԱՆՏԱՐԱԵՍԼԻ<sup>(\*)</sup>

ՆԱԽԵԲԻ Պ.

Ենկախս հոգւոյն շունչդ յաւերժական, Ազատութիւն, դու ու այլ ուրեք այնչափ փողփողուն ես, որչափ խաւարչտին բանտերու մէջ։ Հոն,

(\*) Ըլլանի գլեակը Քլարէնսի և Վիլնէօվի մէջ առ կիցնայ, որ Ճենել լուսի ընին ծարը շնուռած քաղաք մ'է : Հռոդանոս (Ո.օն) գետը Ըլլանի ձախ կողմէն կը յորդէ Դղեակին գիմնոցը կ'երեւան Պու-

դու սրտից մէջ կը բնակիս—սիրով՝ զրը  
քու սէրէդ ՚ի զատ և ոչ մէկ սէր մը  
չէ կարող գերել. և երբ դրդիքդ եր-  
կաթներու մատնուած խոնաւ գետ-  
նափորի մը աղջամղջին արհաւրացը մէջ  
կը հեծեծեն, իրենց մարտիրոսութիր  
հայրենեաց յաղթանակը կը հիմնէ և  
անկտիսութեան փառքը սաւառնաթե  
կը պանայ հողմոց թեւերուն վրայ։  
Ծիլըն, քու բանտդ սրբավայր մ'է.  
քու տիսրամած սալայատակիդ սէլզան  
մ' է — զի Պօնիվառ քայլեց նորա վր-  
բային և իւր քայլերը իրենց հետքերը  
գրօշմեցին հմն իբրեւ թէ դաշտի մը  
վրայ—այն հետքերը չըլսոց որ ջնջուին.  
նոքա բոնաւորութեան դէմ բողը-  
արկու են առ Աստուած։

վըլէի և Սէն—Ճէնիշի վրայէն Լա Մէլըրիի բար-  
ձունքը և Ավեանց գոտին՝ Լիճը՝ որ դղեակին պա-  
րխանէրը կը թանայ այս տեղոց մօտերը Գաղղե-  
ական չափով ունի հարիւր ոտք խորութիւն ունի:  
իւր սպիտակ սպարիսներսը խօստ հեռուեն ալ  
երեցող այս գլեակը բաւական ընդործակ չէնք  
է, ներքնակողմը բանտերու բաժնուած, ուր միջն  
դարու մէջ հերետիկոսը կը բանտարկուէին. յետոց  
քաղաքական յանցաւորաց յատկացաւ Արմին երկաց-  
նութեանը ժամանակէն սեւացեալ գերան մը կայ.  
սոի պատժապարտաց կառափնառի տեղ կը ծա-  
ռայէր :

ԺԵ գարուն վերջիրը Ճենեվրայ քաղաքը իւր  
շուրջ գտնուած բանաւորներուն ձևոքն ինաւու-  
վուանգի մէջ էր. Պօնիվառ իւր հայրենեաց ան-  
կախութեան ամենէն անվեհէր ախոյեաններէն մէկն  
եղաւ և նորա համար իսրաքնքը զնէց։ Սավոյայի  
Դուքը 1519ին Ճենել վրա մոտած ըլլալով մասնու-  
թեամբ Պօնիվառ ձեռք ձգէց և զիտնալով նորա  
անհաշտ ասելութիւնը իւր իշխանութեանը գէմ։  
նախ կրօիէի մէջ բանտարկէլ տուու զայն երկու-  
տարի, յետոց Ծիլնի գլեակը փիստրեց, ուր վից  
տարի մասց շղթայակապմինչեւ որ Պեռնացիր 1556ին  
Պօտի գաւառին սիրելով զնէն ալ ազատեցին։

Բանտէն Ելնարուն Պօնիվառ իւր հայրենիքը ա-  
զատ և վերանորոգեալ գտնելու երջակութիւնն ու-  
նեցաւ. Հասարակագետութեան (Նելւետիոյ) և իւր  
քաղաքակաց երախտագիտութեանն ու մէծարան-  
ցը արժանացաւ և մինչեւ մահը չ'դադրեցաւ բնա-  
երկին բարօրութեան համար աշխատեց։